

Ո՞էկը ջերմ ունեցողի մը համար կուտ մը կուտայ , որ հարեն ու խմբը նեն . անոնք սխալ իմանալով տաք ջրով կուտան , և տաք պահելու ետևէ կ'ըլլան . մէյմ'ալ կը նային որ բոլոր մարմինը և ըղունկները կը կապուտնայ : Ո՞էկէն դեղը տուտողին իմաց կուտան , կ'իմանայ սխալումը , վրայէն նորէն պաղ ջրով կուտայ , ու շուտով կը լաւցընէ :

Պ . Պ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՕՐՎԵՆ ԼՅԴՀ :

ԼՅՅ տեսակ ծովային թռչուններն խիստ շատ են , և գրեթէ ամենքն ալ կամ ձկներով և կամ սատակներով կ'ապրին : Տեսքերնին տգեղ է , ճայներնին անախորժ . բնութեամբ կատաղի , և այնչափ անյագ են , որ չէ թէ միայն ձկանց համար պատրաստուած կարծովն կը բռնուին , հապա նաև տախտըկի մը վրայ նկարուած ձկներու վըրայ ալ կ'իջնան և կերակրոյ համար իրարու հետ ալ անդադար կը կուուին : Լյյս թռչնոց կտուցն սուր երկայն ու երկու կողմերն տափակ է , ճայրն ալ կեռ . պոզը ձեղք չունի և սուքերն երկայն է , մատուցներն ալ միակտոր մաշկով պատած է , գլուխն հաստ և կարծես թէ ուսերուն մէջ մտած է : Լյոնք ծովեղերքն աղէկ կը վազեն , ջրոյն վըրայ ալ արագապէս կը թռչին : Ծառվու մօտ լեռներուն ժայռերուն վրայ կը նատին , և ինչուան հարիւր փարսախ տեղ ցամաքէն կը հեռանան . և ամէն կղզիներն ու աղի ջուր եղած տեղեր կը գտնուին : Ո՞իսերնին պինդ և հոտած է :

Հոս ասոնց մէկ քանի տեսակն դընենք . որոնց շատը գունով կը տարբերին իրարմէ . և այս թռչնոց գոյնը միշտ

միակերպ չէ , քանի որ տարիքնին առնեն գոյներնին ալ կը փոխեն :

Վախաւոր տեսակներէն մէկն ծովու թազմագունի լուգին է , քսան բթաչափ երկայնք ունի . վրայի կտուցին ծայրը կեռ՝ տակինն վրայինէն քիչ մը երկայն , ազքերն մոխրագոյն , գլուխն խիստ խոշոր , կոնակն ու վիզն բաց մոխրագոյն է , թեւերուն երկայն փետուրներն սեկակ , կուրծքն փորը և ազդեցքն ձերմակ , ոտքերն նարնջի գոյն , եղունգներն սե :

Ո՞արդուն մէկն այս տեսակ ծովու լուգը մը տեսեր է , որ պղտի կենդանիներու հետ կը ծեծկուի . շուն ու կատուի հետ կուռելու ատեն՝ անոնց պոչն խածնել կը սիրէ եղեր . Ճերմակ թաշկինակ ցուցընելուն որչափ ձայն ունի կ'ըսեն կը կանչուրուտէ վախէն : Ուրիշ մ'ալ ասոր ընտանեցածն տեսեր է որ ամէն օր նոյն ատեն կ'երթայ խոհակերոցին դրան առջև կը կենայ եղեր որ իրեն կերակուր տան . շատ անգամ ալ տնեցիք սեղանին ելլելէն ետև ասիրկայ ներս կը մննէ թեւերն բացած , ու ձայնելով կերակուր կ'ուզէ եղեր : Պատմութիւն է կ'ըսէ պատմողն , կարծես թէ երեսէն դառնութիւն կը կաթէ . ամենւէին ջնողուր որ մէկն իրեն մօտենայ , և մօտեցողին վրան կը վազէ կը կտցէ : Ուրիշ կենդանիէ շվախեր , վրանին ալ երթալու սիրտ ըներ՝ ինչուան որ իրենք չգան :

Լյոր էգն միայն պղտիկութեամբ կը տարբերի արուեն :

Ծառվու լուգին հիւսիսային ծովերուն մէջ շատ կը գտնուի , երբոր այն տեղուանքն կէտ ձուկէն բռնեն , ասոնք հազարներով անոր վրայ կը թափին ու այս դիէն այն դիէն խածնելով մէյմէկ պատառ կը փրցընէն կ'ելլեն կ'երթան : Լյ բաւական չէ , շատն ալ լեռան պէս ձուկը առջևնին ունենալով զարձեալ կը նային որ իրարու բերնէն ալ յափրշտակեն :

Տեսակ մ'ալ կայ ասկէ պղտիկ , որ կտուցի ծայրն սե է , ազքերն մանր ու ամբողջ սե . միայն թեւերուն վրայ բաց

դունով սե գծեր ունի . ոտքերն մուլթ ղեղին , եղունգներն ու պոչն սե :

Հիւսիսային կողմերն ասոր մէկ տեսակն ալ կայ որ ձայնն մարդուս ծիծաղին կը նմանի . մեծութիւնն վայրի աղաւոյ չափ է : Առվորաբար հինգ վեց ձու կ'ածէ ծիթենիի գունով՝ վրան սե սե բծերով . թէ որ մէկն ուզէ ասոնց ձուն գողնալ , թէ արուն և թէ էցն դէմ կ'ելլեն կը կուրտին հետը : Ասոր ձագերուն միսն համով է կ'ըսեն :

(ավու Ճերմակ Խնդիր խիստ պղտիկ է , կտուցն կարմիր . թևերուն երկայն փետուրքն սե՝ ծայրերն Ճերմակ , գըլուխն , կուրծքը , փորն Ճերմակ , կոնակն սե , ոտքերն մուլթ կանաչ , եղունգներն մանր՝ սե : Կ'ըսեն թէ շատ օգտակար է պարտէզներու , որդերն ու թրթուրները ջարդելու :

Խսկէ մեծն ալ կայ որուն ոտքն ու կտուցն կապոյտ է . երկայնութիւնն տասնրվեց բթաշափ , կոնակն՝ բաց մոխրագոյն , թևերուն մէկ քանի փետուրներն սե գծեր ունին . ուրիշ փետուրներն ձեան պէս Ճերմակ է . բայց գոյնը տարի տարուան վրայ կը փոխուի . առջի տարին քիչ մը սե կ'ըլլայ , երկրորդ տարին քիչ մը կը Ճերմակի , երրորդ տարին ձեան պէս Ճերմակ կ'ըլլայ :

Խակ ասոնց մէջ ամենէն մեծն սե կոնակովն է , որ ինչուան մէկ կանգուն երկայնք ունի . կտուցն հաստ , ուժով ու դեղին է , թևերն սե , մէկալ փետուրներն Ճերմակ : Այս տեսակն շատ կը գտուի Խարոպայի ծովերուն մօտերը : Խսկէ քիչ մը պղտիկ , բայց ամենէն կատաղի է Խորվեկիայի ծովու Խնդիր , ասոր կտուցի ծայրն ծուռ ու սուր է . կտուցին արմատին վրայ սե մաշկ մը ունի : Արայի գոյնն ընդհանրապէս սե է , ձանկերն սե , ուժով ու ծուռ :

Աքիստոտելի՝ Խաչանք՝ ըսած թրտունն կ'երևնայ թէ այս պիտի ըլլայ կ'ըսեն բնախօսքն , վասն զի իր որսին վրայ երկնքէն սահանքի պէս կ'իջնայ :

Խորվեկիայի բնակիչներն մեծ պա-

տիւ կը սեպեն իրենց՝ ասոնց բարձր տեղ շինած բոյներն ելլել ու հաւկիթներն առնել . անոր համար հին ատեն օրէնք կար կ'ըսեն , թէ ով որ այս գործքիս մէջ վարպետ կ'ըլլայ , ու իրեն յաջորդ չժողուր , այնպիսւոյն մեռելն արժանի չէ որ հասարակաց գերեզմանքն թաղուի :

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա . Խրէիտա առաջին վիճակ :

Խրկնած երեսը տեսնուած աստղերը անհուն մեծութեամբ մէյմէկ լուսաւոր արեգակներ են , որ Ճառագայթներով իրենց մոլորակներն ալ կը լուսաւորեն : Աստղերը ատենով հաստատուն կը կոչուէին որովհետեւ անոնց վրայ շարժումը չէր տեսնուէկը . բայց հիմա զանազան քննութք ցուցուած է , որ երկնքի ամէն մարմիններն ալ յառաջատութեն շարժմունք մը ունին : Որոնք որ յայտնի մեծ ընթացք մը ունին և շրջան կ'ընեն իրենց արեգական վրայ՝ մոլորակ կ'ըսուին : Աոլորակները երկրիս պէս մարմին են : Աարմին ըսելով կ'իմանանքնիւթմը որ սահման ունի : Խւ իրեք տեսակ մարմին կայ . հաստատուն , լոյծ և օդային : Հաստատուն մարմիններէն անոնք որ իրենք իրենց վրայ կը դառնան , ձւերնին չեն փոխեր , բայց միայն երբոր չափէ գուրս արագութիւն ունենան : Աւստի հիմա մոլորակները գնտածել ըլլալով թէ որ ստեղծուելու ատեննին հաստատուն մարմիններ էին , պէտք էր ըսել որ մակերևոյթնին ամենսեին փոփոխութիւն մը կրած չէ , որով կը հետեցրնենք թէ ինչ որ հիմայ են՝ առաջալնոյնպէս եղած պիտի ըլլային : Բայց թէ որ մէյմը աչքերնիս մեր երկրին վրայ դարձընենք , կը տեսնանք որ կարծիքնիս բոլորովին ծուռ է . և երբոր կ'ընդունինք թէ երկիրս ալ ուրիշ մոլորակաց նման է , պէտք է ըսենք որ անոնք ալ 'ի սկզբան հաստատուն մարմին